

ՀՈԳԻԴ

Չըլլայ թէ հոգիդ փոխուիլ փորձըի,
Մանկական հոգիդ, թրթռացող հոգիդ,
Որ տարիներու բեռն առաւ ուսէս
Եւ նոր հասերով քաղցրացուց իմ սէրս:

Չըլլայ թէ հոգիդ փոխուիլ փորձըի,
Այդ առատաձեռն՝ ոսկի թելերով
Հիւսուած լոյս հոգիդ, եւ ուրախութեան
Համար սիսիայն ծընած քու հոգիդ,

Որ շատ կանուխէն, դառնութեանց ակէն
Ընպեց վիշտերու հիւթը մանկօրէն,
Ու դարձաւ կրծիկ՝ բայց մընաց անեղծ:
Չըլլայ թէ հոգիդ փոխուիլ փորձուի:

Թող փոխուին սիայն փորձութիւններուդ
Եւ փորձառութեանց մէջ լուռ կըծկըւած
Չեւերդդ որոնք կը ծածկեն հոգիդ
Մարդոց աչքերէն. ձեւեր՝ որոնք կարծր

Պատեանի մը մէջ կը բանտեն հոգիդ
Անգութ բառերու, բիրտ արարքներու
Հուրքին մէջ ծեծուած Ե՛սըդ անձնադրուծ:
Ո՛չ, չըլլայ թէ երբեք փոխուի քաղցր հոգիդ:

ԱՆԵԼ